

ՀՈՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԳԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՐ՝ ԵՎԻՐՎԱՍԾ ՍՍՀՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 60-ԱՄՅԱԿԻՆ

Հոկտեմբերի 11-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը՝ նվիրված ՍՍՀՄ կազմավորման 60-ամյակին: Ժողովին ներկա էին ընկ. Բ. Սարկիսովը, Գ. Անդրեևը, Վ. Ղալաձյանը, Հ. Ոսկանյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Ա. Կիրակոսյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Ռ. Սվետլովան, Վրացական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Ե. Խարանեն:

Ժողովը ներածական խոսքով բացեց ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը: Հոկտեմբերյան հեղափոխությունը, ասաց նա, արդարև համարվում է XX դարի մեծագույն իրադարձությունը: Այն վերացրեց դասակարգային ճնշումը, ժողովրդական մասսաների շահագործումը, ուղի հարթեց արդարացի սոցիալիստական հասարակության կառուցման համար: Սովետական Հայաստանը, որը հաճեց 1914—1920 թվականների պատերազմի ու հրդեհների մոխիրներից, կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականության իրականացման առավել փայլուն օրինակներից է: Սոցիալ-տնտեսական և կուլտուրական զարգացման մակարդակների մեջ ազգերի անհավասարությունը կարող էր լրջորեն արգելակել սոցիալիզմի կառուցման գործը: Այդ խզման առկայությունը, այնուհետև ասաց Վ. Համբարձումյանը, հակասում էր լենինյան ազգային քաղաքականության բուն ոգուն, որը նպատակամղված է երկրի բոլոր ազգերի և ազգությունների փաստական հավասարության ապահովմանը, նրանց բարգավաճմանն ու մեծացմանը: Ահա թե ինչու այդ անհավասարությունը վերջ դնելու կուրսը դարձավ կուսակցության գլխավոր գծի կարևորագույն, անբաժանելի կողմերից մեկը: Սովետական Ռուսաստանի օգնության շնորհիվ բոլոր հանրապետությունները և մասնավորապես Հայաստանը կարողացան շատ կարճ ժամանակում լուծել այնպիսի խնդիրներ, որոնց համար ուրիշ պայմաններում կպահանջվեր մի ամբողջ դարա-

շրջան: Այսօր սովետական հանրապետություններից յուրաքանչյուրը, այդ թվում և Հայաստանը, շարունակեց Վ. Համբարձումյանը, օրգանական և անբաժանելի մասն է սովետական մեծ պետության, որը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ կենսագործում է սոցիալական արդարության, բոլոր ազգերի և ազգությունների հոգևոր առաջադիմության ու հավասարության լենինյան սկզբունքները: Ապա զեկուցողը խոսեց գիտության կազմակերպման մասին, նշեց նրա հսկայական ազդեցությունը հանրապետության արդյունաբերական և գյուղատնտեսական պոտենցիալի զարգացման վրա:

Ցուրաքանչյուր հանրապետության ֆունդամենտալ գիտությունը պետք է ունենա սեփական դեմք, ոչ թե կրկնի, այլ լրացնի մյուս հանրապետությունների աշխատանքը: Դրա հետ մեկտեղ պետք է բարելավվեն նրանց համագործակցությունը և կոորդինացումը: ՀՍՍՀ ԳԱ նախագահությունը, ասաց նա, մեծ նշանակություն է տալիս ֆունդամենտալ հետազոտությունների արդյունքների գործնական կիրառությանը: Այդ նպատակով սկսվել է և կշարունակվի ակադեմիայի ինստիտուտների շրջանակում կոնստրուկտորական բյուրոների և փորձնական արտադրությունների կազմակերպումը: Թույլ ֆունդամենտալ գիտությունը չի կարող նպաստել տեխնիկական մտքի առաջընթացին և արտադրության առաջադիմությանը: Դա նշանակում է, որ գիտնականները, չկտրվելով մանրօրյա իրողություններից, պարտավոր են բարձրացնել ֆունդամենտալ հետազոտությունների մակարդակը: Այդ առնչությամբ վերջում Վ. Համբարձումյանը շեշտեց որակյալ կադրերի պատրաստման, նրանց ընտրության և դաստիարակության կարևոր նշանակությունը:

«ՍՍՀՄ կազմավորման 60-ամյակը» զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի փոխպրեզիդենտ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ա. Հավանսիխյանը: Այսօր, հետագարձ հայացք գցելով անցած ուզու վրա, ի-

մաստավորելով մեր հանրապետության պատմական հաջողությունները, ասաց նա, խորապես գիտակցում ենք, որ առանց ուսուցողի, մեր մեծ երկրի բոլոր ժողովուրդների անհաճախները օգնության մենք չէինք կարողանա հասնել այսպիսի հաջողությունների: Սովետական Հայաստանը անցյալից ժառանգություն ստացավ լիովին քայքայված գյուղատնտեսություն: Սովետական իշխանության տարիներին Հայաստանի աշխատավորներն իրենց անձնվեր աշխատանքով, լենինյան ազգային քաղաքականության հետևողական իրականացման շնորհիվ հանրապետության այդ էությունը սկզբից լիովին տնտեսության բարձր զարգացած սեկտորի, որն արժատապես վերափոխեց հայկական գյուղը: Պարենային ծրարի կատարումը, նշեց Ա. Հովհաննիսյանը, որի իրականացմանն ակտիվորեն մասնակցում են նաև մեր հանրապետության աշխատավորները, նրա գյուղատնտեսական արտադրությունը կհրահանգի էլ՝ ավելի բարձր մակարդակի: Այնուհետև նա խոսեց արդյունաբերության զարգացման բնագավառում Սովետական Հայաստանի նվաճումների մասին: Հանրապետության ինդուստրացումը պարտավորեց նրա աննախադեպ վերելքը, ժամանակակից Հայաստանը արդյունաբերական հանրապետություն է, որն ունի արտադրատեսիլական մեծ պտտենցիալ և երկրի միասնական ժողովրդատնտեսական համալիրի կարևոր օղակն է: Սովետական Միության ժողովուրդների եղբայրական փոխօգնության ամենավառ դրսևորումներից մեկն էլ այն է, որ մեր երկրի բոլոր նշանակալի կառույցներն իրագործվում են իրենց կազմով ինտերնացիոնալ աշխատավորական կողմերի վերջինքով:

Տնտեսության և ժողովրդական կրթության զարգացման բացառիկ արագ տեմպերը հնարավոր և անհրաժեշտ դարձրին Հայաստանի վերածումը մեծ գիտության հանրապետության: Ձեռքած հայ ժողովրդի գիտական հարուստ ավանդություններին, առանձնապես հասարակական գիտությունների բնագավառում, շարունակեց ղեկուցողը, Սովետական Հայաստանի գիտության նման ծաղկումը, մասնավորապես բնական ու տեխնիկական գիտությունների բնագավառում, պարզապես աներևակայելի կլիներ առանց Մոսկվայի, Լենինգրադի գիտական հիմնարկների, մեր երկրի մյուս գիտական կենտրոնների բազմակողմանի օգնության և աջակցության: Մենք հպարտությամբ գիտակցում ենք, վերջում ասաց Ա. Հովհաննիսյանը, որ այսօր Հայաստանի գիտնականները գիտատեսիլական և մշակութային առաջադի-

մություն առաջավոր գծում գիտական որոնման ակտիվ մասնակիցներ են և մյուս եղբայրական հանրապետությունների գիտնականների հետ միասին արժանի ավանդ են ներդրում սովետական գիտության զարգացման գործում: «Սովետական Ռուսաստանի դերը Հայաստանի նկատմամբ ԱՄՆ-ի և Անտանտի իմպերիալիստական պլանների ձախողման գործում օրինակով զեկուցեց ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս քարտուղար, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Գալոյանը: Արխիվային նորահայտ նյութերի հիման վրա նա ցույց տվեց, թե օտարերկրյա ինտերվենցիայի և քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում որքան ունալ էին Արևելյան Հայաստանի բնակչության ֆիզիկական բնաշնչման պլանները, երբ ամբողջ Անդրկովկասը գտնվում էր գերմանա-թուրքական ղորքերի, իսկ այնուհետև իմպերիալիստական Անտանտի օկուպացման տակ: Սակայն խոշտանգված Հայաստանի համար այդ վտանգավոր պահին նրան օգնության եկավ բանվորազուղացիական Սովետական Ռուսաստանը, որի ջաշարի զավկները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ջախջախեցին երկրամասի աղատության և անկախության վրա ձեռք բարձրացրած ինտերվենտներին: Հենվելով առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվող փաստական հարուստ նյութի վրա, Գ. Գալոյանը ներկայացրեց Անտանտի իմպերիալիստների հակահեղափոխական, զավթողական պլանները, որոնք, չանալով բռնատիրել Անդրկովկասին, հետապնդում էին Սովետական Ռուսաստանից այն անջատելու և իրենց գաղութը դարձնելու նպատակը: Այնուհետև նա հանդամանորեն անդրադարձավ 1920 թ. աշնան դեպքերին, ներկայացրեց ժողովրդի կյանքի ծանր պատկերը, մատնանշեց թուրք աղագանականների՝ Հայաստանի սահմանները ներխուժելու իսկական նպատակները, Անտանտի իմպերիալիստական պետությունների և ԱՄՆ-ի մասնակցությունն այդ գործում, անդրադարձավ Արևելյան Հայաստանը զավթելու թեմայական փորձերին, հայ ժողովրդի համար օրհասական պահին դաշնակցության պարազուկների վարած հակա-ժողովրդական քաղաքականությանը, համոզիչ փաստերով նշեց Անտանտի տերությունների մասնակցությունն Ալեքսանդրապոլի հակա-ժողովրդական պայմանագրի կնքման գործում:

1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի բանվորներն ու գյուղացիները տապալեցին դաշնակցականների կառավարությունը և հաջողությամբ սովետական իշխանություն: Այդ վճռական

պահին, ասաց Գ. Գալստյանը, հայ ժողովրդին նորից օգնության ձեռք պարզեց ոռու մեծ ժողովուրդը: Հայաստանի աշխատավորները հուսախաբ չեղան իրենց ակնկալիքներում. նրանք կրկին համոզվեցին այն պատմական ճշմարտության մեջ, որ հայ և ոռու ժողովուրդների դարավոր ընդհանրությունն անխախտ է, որ այդ բարեկամությունը նոր բովանդակություն և ուժ հաղորդեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությանը: Սովետական իշխանության հաստատումը արմատապես փոխեց նաև Անտանտի իմպերիալիստների ու քեմալական Թուրքիայի վերաբերմունքը Հայաստանի հանդեպ, Հայաստանը դադարեց նրանց համար

առեծախի առարկա լինելուց: Կառավարող շրջանները հասկացան, որ Հայաստանն անպաշտպան չէ, որ նրա կողքին կանգնած են Սովետական Ռուսաստանը, մեր բազմազգ հայրենիքի ժողովուրդները: Այսօր, վերջում ասաց զեկուցողը, մեր հանրապետությունը սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում ապրում է ազատ, անողժգործում և կերտում հանուն լուսավոր ապագայի՝ կոմունիզմի:

Վերջում, շՍՄԶ ԳԱ պրեզիդենտ Վ. Համբարձումյանը շնորհակալություն հայտնեց զեկուցողներին՝ հետաքրքիր ու բովանդակալից ելույթների համար:

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՐԴԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՐ ՄԱՍԸ ԿԱՆԿԱՆ ՍՍՀ ԳՅՈՒԼԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ

Հոկտեմբերի 12-ին տեղի ունեցավ շՍՄԶ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը՝ հանրապետության գյուղատնտեսության մինիստրության մասնակցությամբ: Ժողովին ներկա էին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի քարտուղար Վ. Ղալալյանը, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ Բ. Սվեալովան, ՀԿ Կենտկոմի գիտության և ուսումնական հաստատությունների բաժնի վարիչի տեղակալ Հ. Ազատյանը:

Ժողովը ներածական խոսքով րացեց շՍՄԶ ԳԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Համբարձումյանը: Մեր կուսակցության XXVI համագումարի, ՍՄԿԿ Կենտկոմի 1982 թ. մայիսյան պլենումի որոշումներում, ասաց նա, հատկապես ընդգծվում է գիտության դերը Պարենայի ծրագրի իրականացման գործում: Գիտաշխատողները պետք է գիտակցեն այդ պրոբլեմի ամբողջ կարևորությունը, որ պահանջում է կոմպլեքսային մոտեցում, մասնագետների համատեղ ջանքեր: Գիտական որոնման ստրատեգիան, մեր աշխատանքի գլխավոր ուղղությունը նախատեսում են ամենից առաջ գյուղատնտեսության բնագավառում հիմնարար և կիրառական հետազոտությունների արդյունավետության բարձրացում: Անհրաժեշտ է պրակտիկայի ընդհանրացման հիման վրա մշակել արտադրության մասնագիտացման, համակենտրոնացման ու միջտնտեսային կոոպերացման հետագա կատարելագործման, աշխատանքի կազմակերպման նոր, առաջադիմական ձևերի արմատավորման և դրա խթանման վերաբերյալ գիտականորեն հիմնավորված հանձնարարականներ:

ՍՄԿԿ Կենտկոմի պլենումը, այնուհետև նշեց Վ. Համբարձումյանը, գիտության աշխատողներին պարտավորեցրեց բարձրացնել գիտական հետազոտությունների արդյունավետությունը կենսարանական, գյուղատնտեսական, քիմիական, ֆիզիկատեխնիկական, տնտեսական և յլ գիտությունների նվաճումների հիման վրա, Պարենայի ծրագրի իրականացումն ապահովելու համար մշակել արդյունավետ մեթոդներ և առաջարկություններ:

«Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի խնդիրները ՍՍՀՄ Պարենայի ծրագրի իրագործման ասպարեզում» զեկուցումով հանդես եկավ հանրապետության գիտությունների ակադեմիայի կենսաբանական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, շՍՄԶ ԳԱ ակադեմիկոս Վ. Ղալալյանը: «Հանրապետության գյուղատնտեսական գիտությունը և ՍՍՀՄ Պարենայի ծրագրի իրագործումը» թեմայով ելույթ ունեցավ Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության մինիստրի տեղակալ, տնտեսագիտության դոկտոր Մ. Մելիքովան:

Ինչպես զեկուցողները, այնպես էլ մտքերի փոխանակության ընթացքում ելույթ ունեցողները նշեցին, որ Պարենայի ծրագրը էպիստեմոլոգիա է տնտեսական ու սոցիալական զարգացման սովորական պլաններից: Այդ նպատակային և կոմպլեքսային ծրագիրը նախատեսում է տնտեսական, սոցիալական, կազմակերպական և գիտատեխնիկական հարցերի լուծում: Ծրագիրը ոչ թե պարզապես խնդիր է առաջադրում, այլև միաժամանակ նշում է դրանց լուծման ուղիներն ու մեթոդները: Ձե-

կուցումներում կոնկրետ առաջարկություններ պովեցին գիտական հետազոտությունների ինտենսիվացման, գյուղատնտեսության բոլոր բնագավառներում դրանց արդյունքների արմատավորման արագացման վերաբերյալ:

ՀՍՍՀ ԳԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԺՈՂՈՎՐ

Հոկտեմբերի 4-ին տեղի ունեցավ ՀՍՍՀ ԳԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ժողով՝ նվիրված ՍՍՀՄ կարմավորման 60-ամյակին: Ժողովը բացեց պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ազգային-բարեփոխարի պաշտոնական տար, ՀՍՍՀ ԳԱ ազգային կոնս. Բ. Առաքելյանը:

«Պատմագիտության զարգացումը Սովետական Հայաստանում 60 տարում» գեկուցումով հանդես եկան պատմական գիտությունների դոկտորներ Վ. Բարխուդարյանը և Կ. Խոջապետյանը: Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը և սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, ասաց գեկուցումը ներկայացնող Վ. Բարխուդարյանը, նոր դարաշրջանն բացեց հայ ժողովրդի կյանքի բոլոր բնագավառներին, այդ թվում հայագիտության և պատմագիտության առաջընթացի համար: Սովետահայ նորաստեղծ պատմագիտության առջև ծառայած էին բարդ ու դժվարին խնդիրներ՝ պետք էր վերանայել անցյալի հայ պատմագիտության ժառանգությունը, ուսումնասիրել նախորդ պատմագիտության անմատչելի կամ նրա անտեսած ուղղություններն ու պրոբլեմները: Հաղթանակից հետո կրեմլական և բուրժուական պատմագիտության աղբյուրները, անցնելով որոնումների ու դեգերումների անխուսափելի ուղի, սովետահայ պատմագիտությունը կարճ ժամանակում դուրս եկավ զարգացման լայն ճանապարհ և հայ ժողովրդի բազմադարյան պատմության ուսումնասիրման գործում հասավ լուրջ հաջողությունների: Այնուհետև հանգամանորեն խոսվեց սովետահայ պատմագիտության հիմնական ուղղությունների, զարգացման շրջանների և ձևերի վերաբերող պատմական որոշումների պահանջների ոգով և այդ դիտակետից զննահատելով կատարված աշխատանքները ու արձանագրելով ձեռքբերված, հիրավի, վիթխարի հաջողությունները, շարունակեց գեկուցողը, մենք իրավունք չունենք անտեսելու նաև եղած թերությունները: Սովետահայ պատմագիտությունն անցած 60

Ընդհանուր ժողովն ընդունեց ծավալուն որոշում, որտեղ արտացոլվեցին Պարենային ծրագրի իրականացման ուղղությամբ հանրապետության գիտական հիմնարկների առջև կանգնած կոնկրետ խնդիրները:

տարում մարքսիստական մեթոդոլոգիական դիրքերից լուսարանել է գրեթե բոլոր հիմնական հարցերը, ուստի և նրա զարգացումն ընթացել է զերազանցապես յայնությամբ: Առաջիկայում պատմագիտական միտքը, հավանաբար, ընթանալու է ավելի շատ խորությամբ, որակի բարձրացման, գիտության արդի պահանջների մակարդակին համապատասխան բարձրորակ փորձեր ստեղծելու ուղիով: Նոր պրոբլեմների ուսումնասիրության հետ մեկտեղ հետազոտվելու և վերազնահատվելու են նախկինում քննության նյութ դարձած շատ խնդիրներ: Ապա Վ. Բարխուդարյանը հանգամանորեն անդրադարձավ այդ պրոբլեմներից առավել կարևորներին: Վերջում հույս հայտնվեց, որ սովետահայ պատմաբանների բազմազամ ու կենսունակ բանակը ընձեռած բոլոր հարավորությունները կօգտագործի պատմական գիտության առջև դրված պատասխանատու խնդիրները իրագործելու ժամանակակից գիտության բարձր պահանջների մակարդակով:

«Պարենային ծրագրի և հանրապետության գյուղատնտեսության զարգացման հիմնական խնդիրները» գեկուցումով հանդես եկավ տնտեսագիտության թեկնածու Հ. Ֆաճրաղյանը: ՍՄԿԿ Կենտկոմի 1982 թ. մայիսյան պլենումը, ասաց նա, ջնջելով «Մինչև 1990 թվականն ընկած ժամանակաշրջանի ՍՍՀՄ Պարենային ծրագրի և նրա իրականացման միջոցառումների մասին» Կենտկոմի զլխավոր քարտուղար Լ. Ի. Բրեժնեի գեկուցումը, հավանություն տվեց գեկուցման մեջ շարադրված առաջարկություններին ու հետևություններին, մինչև 1990 թ. ընկած ժամանակահատվածի համար մշակված ՍՍՀՄ Պարենային ծրագրին: Պլենումը հաստատեց ՍՄԿԿ Կենտկոմի և ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի ընդունած մի շարք որոշումներ, շարունակեց Հ. Ֆաճրաղյանը, որոնց նպատակն է բարելավել երկրի ագրոարդյունաբերական համալիրի պլանավորումն ու կառավարումը, ամրապնդել կոլտնտեսությունների ու սովխոզների էկոնոմիկան, բարձրացնել գյուղի աշխատավորների նյութական շահագրգռվածությունը գյուղատնտեսական մթերքների արտադրության ընդլայնման ու որակի բարձրաց-

ման գործում, գյուղատնտեսական ձեռնարկությունները ամրապնդել ղեկավար կազմերով ու մասնագետներով, բարելավել գյուղական բնակչության բնակարանային, կոմունալ-կենցաղային և սոցիալ-կուլտուրական պայմանները։ Երկրի Պարենային ծրագրի իրականացմանն ուղղված Կենտկոմի մշակած միջոցառումների հիմնական նպատակն է հնարավորին լսփ կարճ ժամանակամիջոցում երկրի բնակչությանը հուսալիորեն մատակարարել անհրաժեշտ սննդամթերք։ Ընկ Կենտկոմի հունիսյան պլենումը քննարկեց ՍՍՀԿ Կենտկոմի որոշումները և նշեց, որ հանրապետության գյուղատնտեսությունն իր զարգացման մակարդակով ու սոցիալական է մնում ներկայացվող պահանջներից և իր ունեցած հնարավորություններից։

Հանրապետության բնակչությանը պարենային ապրանքներ մատակարարելու գործը արմատապես բարելավելու նպատակով և, հիշելով աշխատանքի միութենական բաժանումից, գյուղատնտեսական մասնագիտացման ու կատարելագործման հեռանկարներից, նշեց Շ. Ֆահրագյանը, մշակվել է նաև մեր հանրապետության Պարենային ծրագիրը։ Ապա զեկուցողը հանգամանորեն անդրադարձավ հանրապետության գյուղատնտեսության զարգացման հիմնական խնդիրներին, նշեց առկա թերությունները և դրանց վերացման ուղիները։

Զեկուցումները լավացին մեծ ուշադրությամբ ու հետաքրքրությամբ։ Առթերի փոխանակությունը մասնակցեցին ԼՍՍՀ ԳԱ ակադեմիկոսներ Բ. Առաքիլյանը և Ա. Առաքիլյանը։

ԼՍՍՀ ԳԱ ՓԻԼԻՍՈՓՈՒՅՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ԺՈՂՈՎԸ

Հոկտեմբերի 5-ին տեղի ունեցավ ԼՍՍՀ ԳԱ փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ժողովը՝ նվիրված ՍՍՀՄ կազմավորման 60-ամյակին։ Ժողովը բացեց փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ակադեմիկոս քարտուզար, ԼՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բուռալյանը։

«Մինչև 1990 թ. ընկած ժամանակաշրջանի Պարենային ծրագրի իրականացման սոցիալական հայեցակետերը՝ զեկուցումով հանդես եկավ փիլիսոփայական գիտությունների ղեկավար Կ. Բուռալյանը։ Ինչպես հայտնի է, ասաց նա, ՍՍՀԿ Կենտկոմի 1982 թ. մայիսյան պլենումը հաստատեց մինչև 1990 թ. ընկած ժամանակահատվածի ՍՍՀՄ Պարենային ծրագիրը, որի իրականացումն ունի հսկայական տրևտեսական, սոցիալական և քաղաքական նշանակություն ինչպես մեր երկրի ներքին զարգացման, այնպես էլ միջազգային ասպարեզում խաղաղության ու սոցիալական առաջադիմության համար մղվող պայքարում։ Այն հնարավորություն կտա հաղթահարելու պարենային ապրանքների մատակարարման բնագավառում ներկայումս առկա զփակությունները, հուսալիորեն երաշխավորելու երկիրը ամեն կարգի պատահականություններից, ղզալիորեն նվազեցնելու միջազգային շուկայի իրավիճակի ներգործությունը սոցիալիստական էկոնոմիկայի վրա։ Պարենային ծրագիրը, ինչպես և սնտեսական, սոցիալական, քաղաքական և հոգևոր բազմաբովանդակ պրոցեսներ ընդգրկող ամեն մի այլ ծրագրային մեծ խնդիր, ասաց զեկու-

ցողը, կարելի է հետազոտել ու գնահատել ամենատարբեր տեսանկյուններով։ Այնուհետև Կ. Բուռալյանը հանգամանորեն անդրադարձավ Պարենային ծրագրի իրականացման սոցիալական որոշակի, այն է, պատմական մատերիալովի համար բնութագրական ընդհանուր սոցիոլոգիական, սոցիալ-փիլիսոփայական և մարդասիրական հայեցակետերին։ Պատմական մատերիալովի վերահիշյալ և հնարավոր մյուս հայեցակետերի մշակումը, վերջում ասաց նա, անշուշտ, կնպաստի ՍՍՀԿ XXVI համագումարում քննադատված սխալաբանական տեսաբանության նկատելի տարրերի հաղթահարմանը և մարքու-լինիլյան տեսության կոնկրետացմանը, ստեղծագործական հետազա զարգացմանը։ Դա, հետևաբար, կնպաստի մեր երկրի առջև ծառայած պրակտիկ, հուլժ կարևոր և մասշտաբային խնդիրների իրականացման պրոցեսի օրինալարագացմանը՝ ի շահ սովետական բազմազգ ժողովրդի բարեկեցության մակարդակի համընդհանուր վերելքի ապահովման։

«Հայ մշակույթի ինտերնացիոնալ բնույթը՝ զեկուցումով հանդես եկավ բանասիրական գիտությունների ղեկավար Գ. Հովհաննիսյանը։ Ինչպես վկայում է դարձրի պատմությունը, ասաց նա, աշխարհի ամեն մի ժողովուրդ ունի իր ազգային բնորոշ հատկանիշները, ուրույն ղեմքը, ղզին, որոնք ցայտուն դրսևորվում են նրա գրականության, արվեստի, նիստուկացի, էություն մեջ։ Հայ ժողովրդի պատմական ճակատագիրը նրան լայն շփման մեջ է դրել աշխարհի շատ

ժողովուրդների հետ: Ամենահոնավոր ժամանակներից սկսած հայերն արթուն հետևել են համաշխարհային կուլտուրայի զարգացմանը, սովորել են ու միաժամանակ նշանակալից ավանդներ դրել այդ առաջընթացում: Գ. Հովնանը հանգամանորեն անդադարձավ հայ ժողովուրդին, նրա երկրին, մշակույթին, ազգային բնորոշ հատկանիշներին աշխարհի տարբեր ազգերի խոշոր մտածողների տված գնահատականին, Անդրկովկասի, ինչպես և Արևելքի ժողովուրդների

ազգային, մշակութային ու բարեկամական հարաբերություններին վերաբերող հայ ժողովուրդի մեծանուն զավակների արժարժույթներին: Հայ ժողովուրդի կապն աշխարհի ժողովուրդների հետ, վերջում ասաց նա, միշտ էլ խարսխված է եղել եզրադրական բարեկամության, սիրո ու հարգանքի վրա: Ազգային այդ գեղեցիկ ու վեհ ավանդույթը դարբեր ընթացքում սերունդները շարունակել ու սրբութամբ պահպանել են այսօր:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Սեպտեմբերի 21—25-ը նրկանում տեղի ունեցավ հայոց լեզվի ծագման ու պատմական զարգացման, արդի վիճակի ու հեռանկարների, դրացի լեզուների հետ կապերի ու շփումների, հայերենի քերականական կառուցվածքի տարբեր խնդիրների քննությունը նվիրված միջազգային հայերենագիտական գիտաժողով, որի աշխատանքներին մասնակցում էին սովետական և արտասահմանյան 10 երկրներից հրավիրված ավելի քան 100 լեզվաբաններ, բանասերներ, հայագետներ: Գիտաժողովի լիազուցված նիստի րացմանը՝ սեպտեմբերի 21-ին, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի մեծ դահլիճում, ներկա էին Հայաստանի կոմկուսի կենտրոնի քարտուղար Կ. Դալլախյանը, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահի տեղակալ Հ. Բազդասարյանը:

Նիստը ներածական խոսքով քաղեց ՀՍՍՀ ԳԱ փոխպրեզիդենտ Ա. Հովհաննիսյանը: Ակադեմիայի նախագահության անունից ողջունելով գիտաժողովի մասնակիցներին, նա մասնավորապես շեշտեց հանրապետության լեզվաբանների գիտական բազմակողմանի կապերը ինչպես Սովետական Միության, այնպես էլ արտասահմանի լեզվաբանական կենտրոնների ու գիտնականների հետ, որոնց հետ պարբերաբար փոխանակում են գիտական ինֆորմացիա, համագործակցում որոշ կարևոր խնդիրների լուծման բնագավառում: Միջազգային հայերենագիտական գիտաժողովի նպատակն է, շարունակեց Ա. Հովհաննիսյանը, նպաստել այդ գիտական կապերի ամրապնդմանը, տարբեր երկրների լեզվաբաններին հնարավորություն ընձեռել ծանոթանալու ոչ միայն իրենց անմիջական հետաքրքրությունների, այլև հայերենագիտության հարակից ասպարեզներում վեր-

ջին տարիներին ձևեր բերված նորագույն նվաճումներին, արդյունավետ համագործակցություն հաստատելու հայերենի հետագա ուսումնասիրության ուղղությամբ:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց և ստեղծագործական նորանոր հաջողություններ մաղթեց ժողովրդական ղեկավարների նրանի բազմակողմ գործիչի նախագահ Մ. Մալախյանը: Հատկանշական է, ասաց նա, որ հայերենագիտական միջազգային գիտաժողովն այսպիսի ընդգրկումով և ներկայացուցչությունով տեղի է ունենում նրկանում՝ հայոց աշխարհի հինավուրց ու միշտ երիտասարդ մայրաքաղաքում: Առաջին անգամ չէ, որ նրկանը գտնվում է միջազգային գիտաժողովի անցկացման վայր, և սակայն առաջին անգամ են այստեղ հավաքվում աշխարհի տարբեր երկրներում հայերենի ուսումնասիրությամբ զբաղվող գիտնականներ: Հայերենագիտությունը վաղուց ի վեր զուրբ է եկել միջազգային ասպարեզ, սակայն հետաքրքրությունն առանձնապես մեծ է մեր օրերում, որի ցայտուն արտահայտություններից մեկն էլ այս գիտաժողովն է: Եվ պատահական չէ, ավելացրեց Մ. Մալախյանը, որ այն տեղի է ունենում նրկանում. այստեղ գործում են այնպիսի գիտական օջախներ, ինչպիսիք են Հայկական ՍՍՀ ԳԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը, Պետական համալսարանը, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտը, Մատենադարանը: Ահնարուն են հայերենագիտության բնագավառում ձևեր բերված նվաճումները, որոնք, ինչպես սովետական, այնպես էլ արտասահմանյան բազմաթիվ ճանաչված հայագետ գիտնականների աշխատանքի արդյունք են: Վերջում Մ. Մալախյանը համոզմունք հայտնեց, որ գիտաժողովը կդառնա ստեղծագործական նոր